ԳԼՈՒԽ ՆԶԸ.

Ով ոք զինուոր և կամ զօրագլուխ թշնամեաց, տալով անձն իւր գերութիւն հայոց, և յառաջ քան զփոխիլ նմայ ընդ գերիս մեր և կամ առաջ քանթէ խաղաղութիւն 'ի այնմ պատերազմի, եթէ առնու սուր և կամ արձակեսցի ընդ դէմ հայոց, և կամ 'ի ձեռս վեր կալցի առ 'ի հարկանել և կամ հարկանիցէ, և կամ փախիցէ մահու մեռանիցէ։

ԳԼՈՒԽ ՆԶԹ.

Ով ոք զինուոր և զօրագլուխ եթէ սպանիցէ գերիս իւր անմեղ 'ի մէնջ առն արեան մահու մեռանիցէ։

ԳԼՈՒԽ ՆՂ.

'Ի ժամանակի պատերազմի և խաղաղութեան ամենայն էգ 'ի բնութենէ մարդոյ թէ քրիստոնեայ թէ հեթանոս ազատ լինի 'ի գերութենէ, և եթէ կլնն ամուսնացեալ ընդ առն, և դուստր կուսօք թշնամեաց 'ի ժամանակի պատերազմի կամաւ ընդունեսցի վարձ մինչև մի դահեկան երծաթ և նաղդ դացի 'ի ձեռանէ զինուորէ մերմէ և խառնակեսցի ընդ նմայ, Օրէնս մեր մի՛ յիշխեսցի 'ի վերայ սոցայ, այլ ով ոք զինուոր և կամ պաշտօնեայ բռնադատութեամբ